Նոտարական ակտի կոդ: 522-20200902-117-4697083
Նոտարական ակտի գաղտնագիր: VEKZ8Y

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԵՐԿՈՒՍԻՆ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆԻ

«ԿՈՂՄ-1»՝ **«ԱՐՄ ՏԵՐՄԻՆԱԼ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը**, հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ ՍԻՍՎԱՆԻ Փ. / 66, գրանցման համար՝ 286.110.1062580, ՀՎՀՀ՝ 02693582, ի դեմս տնօրեն՝ **ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԲԱԼՅԱՆԸ**, ծնված՝ 07/08/1984թ-ին, ՀԾՀ՝ 1708840176, նույնականացման քարտ՝ 006333140, տրված՝ 006-ի կողմից, 31/07/2017թ-ին, հաշվառված ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՍԻՍՎԱՆԻ փողոց, 51 տուն

«ԿՈՂՄ-2»՝ **Հայաստանի Հանրապետությունն ի դեմս ՀՀ Ոստիկանության պետի,** ով գործում է կանոնադրության հիման վրա, ում անունից **երկու հազար քսան թվականի սեպտեմբերի երկուսին/ 02.09.2020թ.-ին/ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Վարդան Մովսիսյանի, կողմից տրված թիվ 27/873 լիազորագրի հիման վրա և ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանության կանոնադրության 15-րդ կետի իը) ենթակետի կետի և 23 հունվարի 2017թ.-ին ՀՀ ոստիկանության պետի կողմից տրված թիվ 98-Ա հիման վրա** հանդես է գալիս լիազորված անձ **ԻՍՐԱՅԵԼ ՄՀԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԸ** (ծնված՝ 27/07/1987թ/հազար ինը հարյուր ութսունյոթ թվականի հուլիսի քսանյոթին/, ՀԾՀ՝ 3707870642, նույնականացման քարտ 005833934, տրված՝ 011-ի կողմից, 28/04/2017թ/երկու հազար տասնյոթ թվականի ապրիլի քսանութին/, բնակության հասցե՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ նրբանցք, 8Ա տուն),

ԿՆՔԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ՝
1. **«ԱՐՄ ՏԵՐՄԻՆԱԼ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը** ի դեմս տնօրեն՝ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԲԱԼՅԱՆԻ և **Հայաստանի Հանրապետությունն ի դեմս ՀՀ Ոստիկանության պետի լիազորված անձ ԻՍՐԱՅԵԼ ՄՀԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ,** այսուհետև «ԿՈՂՄԵՐ», որոշեցին լուծել ՀՀ «Երևան» Նոտարական տարածքի նոտար՝ Մարինե Մանուկյանի կողմից 03.10.2019թ. վավերացված թիվ 3427 անշարժ գույքի ենթավարձակալության պայմանագիրը:
2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու պահից, դադարում են Պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունները:
3.«ԿՈՂՄ-2» անշարժ գույքը հանձնելու է «ԿՈՂՄ-1»-ին հանձնման-ընդունման ակտով 1/մեկ օրվա ընթացքում:
4.Կողմերը հաստատում են, որ սույն պայմանագրի լուծման պահին «ԿՈՂՄ-2»-ը «ԿՈՂՄ-1»-ի նկատմամբ ունի 1.446.667/մեկ միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ/ Հայաստանի հանրապետության դրամի չափով պարտավորություն, որը պարտավորվում է վճարել 10/տաս/օրվա ընթացքում:
5. Սույն համաձայնագրի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում է «ԿՈՂՄ-2»-ի կողմից:
6. Սույն համաձայնագիրը կողմերի ցանկությամբ կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
7. Համաձայնագրի բովանդակությունը կողմերի կողմից ընթերցվեց:
8. Բովանդակությունը բավարարում է կողմերի պահանջներին:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝
«ԿՈՂՄ-1»՝
**«ԱՐՄ ՏԵՐՄԻՆԱԼ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**

ի դեմս տնօրեն՝ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԲԱԼՅԱՆ

«ԿՈՂՄ-2»՝
**Հայաստանի Հանրապետությունն ի դեմս**
**ՀՀ Ոստիկանության պետի**
լիազորված անձ ԻՍՐԱՅԵԼ ՄՀԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆ

երկու հազար քսան թվականի սեպտեմբերի երկուսին, սույն համաձայնագիրը պայմանագրի լուծելու մասին վավերացվել է իմ ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար **ՄԱՐԻՆԵ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՍ** կողմից: Համաձայնագիրը պայմանագիրը լուծելու մասին կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը ստուգված է, իրավունակությունը պարզված: Համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման գրասենյակում:
Գրանցված է սեղանամատյանում 15-7գ:

Գանձված է պետական տուրք՝ երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար երկու հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Մարինե Գերասիմի Մանուկյան